ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 03.04.2001

Սույն օրենքը սահմանում է անհատ ձեռնարկատիրոջ իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը, նրա գործունեության երաշխիքները եւ գործունեության դադարեցման պայմանները:

Հոդված 1. Անհատ ձեռնարկատերը

Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից եւ իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է:

Անհատ ձեռնարկատեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա գործունակ քաղաքացիները, ինչպես նաեւ քաղաքացիություն չունեցող այն անձինք, որոնց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը չի սահմանափակված օրենքով:

Անհատ ձեռնարկատեր չի կարող գրանցվել սնանկ ճանաչված այն ֆիզիկական անձը, որը դիմում տալու պահին չի կատարել սնանկ ճանաչելու համար հիմք հանդիսացած իր պարտավորությունները:

Անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են օրենքով առեւտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձը պարտավոր է հանդես գալ որպես անհատ ձեռնարկատեր:

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից, որպես ֆիզիկական անձ, ձեռնարկատիրական գործունեության իրականացումը համարվում է անհատ ձեռնարկատիրոջ իրականացրած գործունեություն:

Հոդված 2. Անհատ ձեռնարկատիրոջ մասին օրենսդրությունը

Անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան սույն օրենքով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը:

Հոդված 3. Անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունը եւ գործունակությունը

Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունը եւ գործունակությունը ծագում են նրա պետական գրանցման պահից եւ դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաեւ օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից:

Հոդված 4. Անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցումը եւ նրա գործունեության դադարեցումը

Անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցումը եւ նրա գործունեության դադարեցումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

Անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը կատարվում է անժամկետ, եթե նա իր դիմումի համաձայն ժամկետային գրանցում չի պահանջում: